ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ** **22/դեկտեմբերի/2021թ.**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .........15.........անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին** համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնակատար Աշոտ Խաչատրյանը, համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնակատար Հայկ Դավթյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը:

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը**

**Մինչ նիստի սկսվելը արձանագրվեց, որ համաձայն ավագանու 17.12.2021 թ. N 83-Ա որոշման** Ջերմուկ համայնքի ղեկավարին գրավոր իրենց կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները ներկայացրել են ...«Քաղաքացիական պայմանագիր», «Արդար երկիր» և ...«Մեր համայնքը»...խմբակցությունները:

Լսեցին
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 47-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի N 52-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.9 «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գործունեության դադարեցման մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.10. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.11. Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ---15--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 47-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2 մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 47-Ն որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ---15--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգի 49-րդ կետը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3… հոդվածի 1-ին մասով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու երեք մշտական հանձնաժողովներ՝

*ա) Ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողով*

*բ) Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով*

*գ) Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողով:*

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» N 52-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----14---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Միրայր Բաբայանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----13---- *Դեմ*----2---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսիկ Սարգսյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ----14---- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----*

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արտակ Բագրատյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ----13---- Դեմ-----2----- Ձեռնպահ-----0-----*

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսիկ Սարգսյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*-----13----- *Դեմ*-----2----- *Ձեռնպահ*-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արմենուհի Սաֆարյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*-----15----- *Դեմ*-----0----- *Ձեռնպահ*-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Սևակ Մկրտչյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- Դեմ----2---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով՝

1. Դադարեցնել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գործունեությունը՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները փոխանցելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն վերակազմակերպված Ջերմուկ համայնքին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային կառավարչական հիմնարկին ամրացված գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներառել և հաշվառել նոր հիմնադրված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2–րդ մասի հիմքով Ջերմուկ համայնքի վերակազմակերպմամբ պայմանավորված Ջերմուկ համայնքի կազմում գտնվող և Վայք համայնքին միավորված

Հերիեր և Կարմրաշեն գյուղերի բոլոր՝ հաշվառման ենթակա և առկա, ակտիվներ պարտավորությունները փոխանցել Վայք համայնքին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 22-ից:

Կողմ---15--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներ դրույթներով՝

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի հիման վրա ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N 51-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 22-ին:

Կողմ---15--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի , 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891- պահուստային միջոցներ/տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 43.5 մլն ՀՀ դրամով, որից՝

ա) 40.0 մլն ՀՀ դրամն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի զարգացման հնգամյա և տարեկան աշխատանքային պլաններով 2022 թվականին նախատեսվելիք սուբվենցիոն (կապիտալ ծախսերի ) ծրագրերի և միջոցառումների իրականացման համար:

բ) 3500.0 հազար ՀՀ դրամն ուղղել «05-01-01-աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական դասակարգման «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին » տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում« ՀՈԱԿ-ի աշխատակազմին դրամական պարգևատրմամբ խրախուսելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-----14----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | |
| Բագրատյան Արտակ Կաղենի | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | |

| | |
|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |
| Մկրտչյան Սևակ Վանիկի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավար՝* ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը